

կազմող տաճիկներն իրենց հետ Ասորեստանէն բերած շոպլուժեան և ծուլուժեան ամեն հետևանքներն արդէն իսկ արմատացուցած են երկրին մէջ, որոց օրինակին զոհ գնացած է և Հայոց վայելչութիւնն որ պիտի ունենային, եթէ իրենց հայրենի սովորութիւններն կորուսած չլինէին։

(Կլարոս-հակի)։

Կ. Վ. Ս.

### ԹԵԽԱԻՈՐ ԶՈՒԿ ՄԻ.

Զուկ մի թուող թեւաւոր

Դըժգոհ իւր բաղդէն

Դարձաւ կասէր իւր ծեր մօր

— « Զգիտեմ ինչ անեմ »

Ոհ թէ արդեօք ինչպէս պէտքէ

Որ ազատվիմ մահուանէ .

Երբոր թուչիմ օղի մէջ ,

Վախս է սաստիկ և անվերջ ,

Մեր ծովային արծիւներէն ,

Նոցա ահեղ մագիլներէն :

Իսկ երբ մըտնեմ ծովին խոր

Հանածկներն ահաւոր

Մահ կսպառնան անդադար ,

Մէկ տեղ հանգիստ չեմ գըտնար » .

Ծերուկ մայրը « որդեակ » ասաւ ,

Աշխարհում կան փորձանք անբաւ ,

Եթէ կամիս լինել հանգիստ ,

Ընտրիր ճանապարհ փոքրիկ ,

Եւ նորա մէջ առաջ գընա ,

Որով կլինիս երջանիկ .

Ոչ օղին մէջ բարձրացիր

Եւ ոչ ծովին խոր մըտիր » . . . .

ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

### ՎԱՐՍԿԻՉ ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ.

Վարսկիչ Կարապետ հիւանդ-իւնէն :

( « Արարատ » № 6. )

Շարունակներ վարակիչ կպռողական հիւանդութիւնների տարածման և ծագման մասնաւորութիւնները պատմել .



Կարգի մասին ուղղակի վարակումը սաստիկ է, նա կարող է առաջանալ հիւանդների արիւնով պատուաստելուց, նմանապէս հիւանդների արտասուքներով, խոչարիով և նորա ծիւղերի լորձիւնոտ նիւթը ևս վարակիչ յատկութիւն ունին։ Իւրաքանչիւր առարկայ որեւիցէ կեղտով հիւանդներին հպուած լինելով — ի միջի այլոց և բժշկի հագուստը — կարող են վարակիչ թոյնը տարածել։ Ընդհանրապէս կարմրուկը հիւանդներին յարաբերութիւն ունեցողներին է վարակում, դորա համար բաւական է շատ թէ քիչ միջոց հիւանդի բնակարանում լինել։ Բացի անհատական տրամադրութիւնը հիւանդանալու համար ունի ևս մեծ նշանակութիւն ի հարկէ և թոյնի որքանութիւնը հիւանդի բնակարանի մէջ։ Թոյնի քանակութիւնը աւելի մեծ պիտի լինի վատ հոգմարարված բնակարաններում կամ հիւանդանոցներում, քան թէ կանոնաւոր հոգմարարներ ունեցող տներում։ Բացի ընտանեկան յարաբերութիւնը, մանկական պարտեզները և ուսումնարանները շատ անգամ վարակման աղբիւր են դառնում։ Կարմրուկի տարածումն ուսումնարանների միջոցով աւելի հեշտ կարող է պատահել, մին որ առողջ մանուկները, որոնց ընտանիքում կարմրուկով հիւանդ կայ, կարող են շորերի հետ վարակիչ կարմրուկի թոյն տարածել ուսումնարանների մէջ և կամ կարող է պատահել որ արդէն վարակված մանուկները, լինելով հիւանդութեան առաջին շրջանում, երբ հիւանդութեան արկածները պարզ չեն արտայայտված, շարունակում են ուսումնարան երթեկեկութիւն անել, մինչև հիւանդութեան պարզվելը, երբ ծնողները արգելում են նոցա ուսումնարան գնալ, ի հարկէ անկասկածելի է որ կարմրուկով վարակված մանուկները հիւանդութեան այդ շրջանում կարող են միւս ընկերներին ևս վարակել, շատերը ասում են և փորձերն ևս հաստատում են, որ այդ շրջանում կարմրուկի թոյնը աւելի է ներգործում։

Բժշկական գրականութեան մէջ գտնում են շատ օրինակներ, որոնք հաստատում են կարմրուկի ուղղակի փոխադրական տարածման եղանակը։ Պաշտում ասում է որ ամբողջ 65 տարուայ միջոցում Ֆարէյեան կղզիներում կարմրուկ չէր յայտնված մինչև որ ցամաքից եկած մի կարմրուկով վարակված անձն ներս բերեց այդ կղզիներում վարակման աղբիւրը։ Նա ամենից առաջ վարակեց իւր ծնողներին, յետոյ վարակումը շուտով տարածվեցաւ բոլոր կղզիներում, այնպէս որ 7 ամսի միջոցին այդ կղզիների 7782 բնակիչներից մօտ 6000 հոգի վարակվեցան կարմրուկով, Բոլոր բնակիչները, 65 տարեկանից ցած որոնք ոչ մի ժամանակ չէին ունեցել կարմրուկ արտասահմանում (ցամաքում) վարակման կարմրուկով, այդ փաստը հաստատում է որ մեծ հասակն անգամ անզգայ չէ կարմրուկի թոյնին, և թէ այդ հիւանդութիւնը դեռահաս հասակից յետ շատ քիչ է պատահում, կարելի է բացատրել այն կերպով, որ մարդիկներից մեծ մասը զեռ զեռահաս հասակին տալիս են իւրեանց տուրքը — կարմրուկ ունենալով — և թէ նոքա մի անգամ հիւանդացած լինելով, նոցա դէպի կարմրուկի թոյն ունեցած տրամադրութիւնը թոյլանում է և կամ բոլորովին անհե-



տանում: Իսկ եթե մի որ չափահասակներից դեռ կարմրուկ հանած չէ, կարող է համաճարակման ժամանակ հիւանդանալ որպէս և մանուկները:

Կարմրուկի համաճարակմունքը պատահում են տարվան բոլոր եղանակներին, բայց գլխաւորապէս երևում են աւելի ցուրտ ամիսներում: Կարմրուկից առաջացած մահի դէպքերը ընդհանրապէս շատ չեն, այնպէս որ կարմրուկը կարելի է թելել վարակիչ հիւանդութիւնների կարգում յիշել, միջին թուով հարիւր հիւանդներից մինը կամ երեքը մեռնում են, իսկ աւելի սաստիկ համաճարակմունքի ժամանակ մահի դէպքերը կարող են հասնել մինչև 10% և աւելի: Կարմրուկով հիւանդացողների հասակը մեծ նշանակութիւն ունի հետեւեալների համար. ընդհանրապէս կարելի է ասել, որ մանուկների համար կարմրուկը աւելի երկիւղալի է և թէ երկիւղը հետզհետէ հասակին համեմատ արագ թելեւանում է: Հիւանդանոցներում, չքաւորների բնակարաններում... և այլն, կարմրուկից առաջացած մահկանացութեան տոկոսը աւելի է, վատ և անյարմար առողջապահական պայմանների պատճառով: Ոյժից ընկած, վատ կամ անչափաւոր սնունդ ստացած անհատները և ընդհանրապէս աղքատները աւելի են մեռնում քան թէ առողջակազմ կամ թէ կարողութիւն ունեցող մարդիկներ, որ և կարելի է ասել ոչ թէ միայն կարմրուկի վերաբերմամբ, այլ բոլոր վարակիչ հիւանդութիւնների:

ԱՅ՝ ԲԼ՝ ԴԵ՛Ը (չառագոյն կարմրուկ—քութեշ), վարակիչ յատկութիւն ունի. հիւանդութիւնը տարածվում է ինչպէս և կարմրուկը, հիւանդների և կամ այն առարկաների միջոցով, որոնց վերայ ինչ և իցէ կերպով վարակիչ նիւթը կպած է, ուրեմն կարող է համաճարակումն առաջացնել այն տեսակ երկիրներում, ուր ոչ մի ժամանակ սկարլատինը անգամ պատահած չէ: Բժշկական գրականութեան մէջ կան օրինակներ, որոնք հաստատում են սկարլատինի տարածման այդ եղանակը, առանձնացած տեղեր, գլխաւորապէս կղզիներ և մինչև անգամ ամբողջ աշխարհի մասեր ազատ են եղել այդ հիւանդութիւնից մինչև որ եվրոպացիների հետ ունեցած յարաբերութիւնները պատճառ են դարձել նոցա մէջ սկարլատինի թոյնի տարածմանը: Վարակվելու համար բաւական է փոքր ինչ միջոց լինել հիւանդի բնակարանում: Վարակիչ նիւթը կարող է տարածվել ոչ թէ միայն շորերի, գրքերի, մանուկների խաղալիքների և այլն... միջոցներով, այլ մինչև անգամ կաթը կարող է վարակման աղբիւր լինել, եթէ գնվում է այնպիսի մարդիկներից, որոնց բնակարաններում սկարլատինի հիւանդներ կան:

Շատ հետազոտութիւններ կան, որոնք հաստատում են որ սկարլատինի թոյնը բաւական երկարատե է, այնպէս որ նա հպելով զանազան առարկաների վերայ, բաւական երկար միջոցներ (ամիսներ, տարիներ) պահպանում է իւր վարակման ընդունակութիւնը, նմանապէս նա դիմանում է սաստիկ ցրտին ու բնաջինջ է լինում Ռեօմիւրի ջերմաչափի 80° աստիճանի տաքութեանից (այսինքն ջրի եփվելու ժամանակ): Սկարլատինի թագուցեալ շրջանը (инкубационный периодъ) աւելի փոքր է քան թէ կարմրուկի և ծաղկի. յայտնի է որ կարմրուկի թագուցեալ շրջանը շարունակվում է



8—10 օր՝ ծաղկինը 7—14 օր՝ իսկ սկարլատինի թագուցեալ շրջանը շաբաթականում է միջին թուոյով 4—7 օր:

Սկարլատինը կարող է վարակել Հիւանդութեան առաջին արկածների ժամանակ. թէպէտ և յայտնի որ նա աւելի վարակիչ զօրութիւն ունի Հիւանդի առողջանալու միջոցին. այսինքն Հիւանդի մաշկի թեփը իստակվելու միջոցին. Անհատական տրամադրութիւնը դէպի սկարլատինն այնքան նշանակութիւն չունի, որքան որ կարմրուկին և ծաղկին: Շատ օրինակներ ցոյց են տալիս, որ կան մարդիկ, որոնք իւրեանց բոլոր կենքում անընդունակ են սկարլատինով Հիւանդանալու, չնայելով որ նոքա շատ անգամ սկարլատինի թոյնի ազդեցութեան տակ են լինում: Մարդիկների այս տեսակ անընդունակութիւնը բացատրում է այն դէպքերը, երբ միևնոյն ընտանիքի մէջ, մի քանիսները վարակւում են, իսկ միւսները ոչ, չնայելով որ ամենքն ևս միևնոյն թոյնի ազդեցութեան տակ են և ոչ մինը նոցանից նախապաշտպանողական միջոցներ չէ գործ դնում:

Հասակը բաւական ազդեցութիւն ունի սկարլատինով Հիւանդանալու տրամադրութեան վերայ. նորածինների Հիւանդանալու տրամադրութիւնը աննշան է, երկրորդ տարեկանից մինչև եօթն տարեկան հասակը տրամադրութիւնը դէպի սկարլատինը սաստկանում է և տասն տարեկանից յետ արագ փոքրանում է:

Սկարլատինի տարածման գլխաւոր աղբիւրները մեր ուսումնարաններն և մանկական պարտէզներն են, այդ բանի վերայ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել առաւել ևս որ սկարլատինի թոյնը տարածւում է մանուկների մէջ, ուրեմն և նուրբ հասակ ունեցողների մէջ, որոնց համար այդ հիւանդութիւնը շատ երկիւղալի է: Վատ հոգմահարած դասատուները կարող են երկար միջոց վարակման կետրօն դառնալ:

Սկարլատինի համաճարակմունքը լինում են թեթեւ և ծանր, թէպէտ առաջինները շատ քիչ են պատահում. այն սկարլատինի համաճարակումը, որ 100 հիւանդացողներից 10% մահ է պատճառում, պէտք է թեթեւ համարել, աւելի սաստիկ համաճարակմունքը տալիս են 13%—18% և երբեմն մահկանացութիւնը հասնում է 25%—35%—40%:

Կ = բ + գ + ռ = (բոճա) ազդեցութիւնը հասարակական առողջութեան վերայ շատ աննշան է. բժիշկներից շատերը այդ հիւանդութիւնը վերաբերում են վարակիչ կաշողական հիւանդութիւններին. նոքա ընդունում են որ կարմիր քամու յատկական թոյնը կազմուածքի մէջ է մտնում խանգարեալ մորթի միջոցով. Կարմիր քամու համաճարակմունքը շատ չեն տարածւում, այլ գլխաւորապէս վարակումը մեծ մասամբ պատում է Հիւանդի շրջապատողներին — ընտանիներին, ծառաներին, բժիշկներին, կամ միևնոյն բնակարանում գտնված հիւանդներին և այլն: — Կարմիր քամու հիւանդաբեր թոյնը կարելի է առողջին պատուաստել, կարմիր քամով վարակված ծաղկով հիւանդից վերցրած աւիշկը, կարող է նմանապէս միևնոյն հիւանդութիւնը առաջացնել, Եթէ վերք կապելու նիւթերը կարմիր քամով վարակված հիւանդից լինին վերցրած, կարող են վարակել միւս վերք ունեցող հիւանդներին:



Հասարակական առողջագրահումեան համար աւելի նշանակութիւն ունի կարմիր քամու թոյնի երկարակեցութիւնը: Թոյնաջնջ'ց նիւթերը դժուար են ներգործում դորա թոյնին, այնպէս որ նորա առաջն առնելու համար երբեմն հարկաւոր է լինում բոլորովին դատարկացնել և փութով մաքրել հիւանդների բնակարանները, ուր թոյնը կեդրոնանում է: Արմիր քամուց առաջացած մահի դէպքերի համար ընդհանրապէս ոչինչ չէ կարելի ասել, որովհետեւ նա մեծ մասամբ երևում է միւս հիւանդութիւնների հետ կըցեալ իրրեւ երկրորդական և շատ անգամ ծանր հիւանդութիւն:

Բժշակութիւնը սաստիկ վարակիչ յատկութիւն ունի, վարակվելու համար բաւական է փոքր ինչ միջոց հիւանդի բնակարանում գտնվել, դէպի հիւանդութիւնը միևնոյն տրամադրութիւն ունենալով աւելի շուտով կարելի է վարակվել քանի որ երկար միջոց հիւանդի մօտ գտնվել, այդ պատճառով հիւանդապահները յաճախ են վարակվում քան թէ բժիշկները, իսկ բժիշկները աւելի են վարակվում քան թէ ուրիշները, որոնք քիչ յարաբերութիւն ունին հիւանդի հետ: Բժաւոր տիֆի վարակիչ թոյնը շատ հեշտութեամբ կարող է մի տեղից միւս տեղ տարածվել, առողջներն անգամ իւրեանց շորերով կամ ուրիշ առարկաներով կարող են տարածել մի բնակարանից միւս բնակարան և մինչև անգամ հեռու տեղեր ևս. ասումեն տիֆով հիւանդների կտաւեղէնների լուացորարները յաճախ են վարակվում: Մեծ նշանակութիւն ունի վարակիչ թոյնի համակետրոնանալու աստիճանը, քանի հիւանդի բնակարանը, բնակիչներին համեմատ, ընդարձակ է, քանի բնակարանի հողմարարութիւնը կանոնաւոր է, այնքան ևս հիւանդին շրջապատողների վարակվելու երկիւղը քիչ է: Միւս կողմից սենեակներ և բնակարաններ, բնակիչներով լցված լինելով, և անկանոն հողմարարներ ունենալով, կարող են վարակման զարհուրելի բուն և աղբիւր դառնալ, եթէ մի որեւիցէ կերպով դոցա մեջ վարակիչ թոյնը ներս բերված լինի:

Այդ է պատճառը, որ համարեա բոլոր փոքր իշատէ մեծ քաղաքներում գտնվում են յայտնի կետրոններ, ուր բժաւոր տիֆը զարհուրելի կերպով տարածվում է և երկար ժամանակ տիրապետում է: Լէբէրտ ասում է, որ 1868—69 թ. համաճարակման ժամանակ, Բրէսլավի քաղաքի երկու նշանաւոր փողոցներում հիւանդացան բժաւոր տիֆով համարեա բոլոր քաղաքում հիւանդացողների կէսը: Պետերբուրգ քաղաքի տիֆային համաճարակմունքի հետազօտութիւնները հաստատեցին, որ բժաւոր տիֆը կետրոնանում է գլխաւորապէս մշակների, չքաւորների և այլն բնակարաններում: Ընդհանրապէս իւրաքանչիւր համաճարակման ժամանակ կարելի է համոզվել, որ բժաւոր տիֆը չքաւոր և աղքատ դասի մեջ աւելի է տարածվում քան թէ շատ թէ քիչ կարողութիւն ունեցողների մեջ, մի կողմից այդ պատճառով, և միւս կողմից այն հիման վերայ որ բժաւոր տիֆի համաճարակմունքը շատ անգամ ուղեկցում են սովորին. այդ հիւանդութեան «քաղցած տիֆ» են անուանել:

Այժմեան հայեացքով բժաւոր տիֆը չէ կարող միայն սովից առաջա-



նալ, մինչև որ նորա յատկանիշ վարակիչ թոյնը գոյութիւն չունենայ, Ինչ և իցէ պէտք է ընդունել որ ժողովուրդների մեծ զրկանքների ժամանակի դէպի այդ հիւանդութիւն ունեցած անհատական տրամադրութիւնը նմանապէս մեծանում է, ուստի և մի անգամ ներս բերված վարակիչ թոյնը հարուածում է գլխաւորապէս այն անհատներին, որոնց կազմուածքները թուլացել են ծնշվել են անշափաւոր սնունդ ստանալուց: Անկասկածելի է որ անշափաւոր սնունդ ստացած մարդիկները թոյնի ընդունելութեան և զարգացման համար աւելի լաւ աղբիւր են դառնում, և նոքա թոյնին ընդդիմանալու այնքան կար չունին, որքան որ կանոնաւոր սնունդ ստացած անհատները, և ընդհանրապէս իւրաքանչիւր բժաւոր տիֆի համաճարակման ժամանակ չքաւոր դասը աւելի է տանջվում և զոհվում:

Միևնոյնը կարելի է ասել և անբարեբաղ՝ Բէրլին մասին, որի համաճարակմունքը պատահում են սովորաբար միևնոյն բժաւոր տիֆի համաճարակմունքի ժամանակ և որի ծագման և տարածման եղանակներն ևս բաւական նման են բժաւոր տիֆին:

2նայելով որ 300 տարուց աւելի է անցել Բէրլին անգամ նկարագրելուց, բայց զեռ նորա զարհուրելի հետեանքները մինչև ցայժմ մնում են առանց փոփոխութեան. համարեա վարակիչ կաշողական հիւանդութիւններից միայն դիֆտերիաը կարելի է աւելի մահաբեր համարել, Հիւանդութեան առաջին երեւոյթները յայտնվում են մարմնի այն մասերից, ուր ուղղակի թոյն ներգործել է (քթի, կոկորդի, խոչափողի, աղիքների լորձիւնոտ մաշկին), իսկ յետոյ բոլոր մարմնի հիւանդութիւնն է առաջանում, և գլխաւորապէս դորանով է զանազանվում դիֆտերիաը միւս վարակիչ հիւանդութիւններից, Յայտնի է որ բոլոր վարակիչ հիւանդութիւնները սկսվում են մարմնի ընդհանուր տկարութեամբ (տենդ և այլն....) իսկ յետոյ մարմնի միւս մասերում են երևում հիւանդական փոփոխութիւնները. և այդ պատճառով ընդհանուր տկարութեան ոյժը համապատասխան է տեղական փոփոխութեան ընդարձակմանը և սաստկութեանը:

Մեր Աովկասեան երկիրներում դիֆտերիաը ժամանակ առ ժամանակ տիրապետում է սաստկաբար զոհելով զեռահաս մանուկներին, նա շատ անգամ սկսվում է կոկորդի ուռոյցքով և շարունակվում է կոկորդի և շնչափողի լորձիւնոտ մաշկով և սկսում է խեղդել մանուկներին փակելով շնչառութեան ճանապարհը:

Վարակումը կարող է առաջանալ ուղղակի հպաւորութենից, երբ օրինակ հիւանդը հազելով դուրս է հանում խուխի հետ դիֆտերիաական քերուածը (плежка) և նետում է վերահսկող բժշկի երեսին և կամ միւս իւր շուրջ եղողներին, և կամ կարող է վարակումը պատահել օդի միջոցով, երբ խուխի վարակիչ նիւթ ունեցող մասնիկները կաշում են հագուստներին, կահ կարասիքներին, պատերին և այլն, որոնց վերայ չորանում են և յետոյ փոշի դառնալով խառնվում են օդի հետ, Բնակիչների մէջ դիֆտերիաը սաստիկ արագութեամբ է տարածվում ինչպէս որ կարմրուկը և ծաղիկը: Երբեմն նա սաստիկ կամակորութեամբ ներգործում է մի սահ-



մանափակված տեղում, կամ մի որ և իցէ տանը և մինչև անգամ սենեակում: Գիֆտերիտի թոյնը բաւական երկարակենցաղ է, այնպէս որ երկար ժամանակ համաճարակումից յետ երբեմն երբեմն պատահում են հիւանդութեան մի մի դէպքեր:

Հիւանդութիւնը գտնվում է աշխարհիս բոլոր մասերում, բայց գլխաւորապէս կետրոնանում է բարեխառն գօտու երկիրներում: Մանուկները աւելի են հիւանդանում քան թէ չափահասները: Գիֆտերիտից առաջացած մահի դէպքերը զանազան են, նայելով համաճարակմունքի սաստկութեանը, երբեմն նա հասնում է 30%—70% և աւելի:

Գ. Տ. Գ.

### ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Յունիսի Յին Վաթուղիկէ Էջմիածնի տօնը փառաւոր կերպով տօնվեցաւ: Նախատօնակ երեկոյին Վեհափառ Վաթողիկոսը հանդէսով եկեղեցի իջաւ: Առաւօտեան ժամասացութենից յետոյ, վեհարանի առաջ, Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ, մաղթանք կատարվեցաւ: Երբ մաղթանքը վերջացաւ, միաբանական ուխտը ներկայանալով Վեհափառ Վաթողիկոսին ի շնորհաւորումն մեծ տօնի, Հայրապետական քաղցր օրհնութիւնն այս խօսքերով ընդունեց Նորին Օծութեան բերանից. «Տէր Աստուած զՄայր Աթոռս մեր զտուրը Էջմիածին զմեծ Վաթուղիկէ Հայաստանեայց հաստատուն պահեսցէ, զմիաբանութիւնս մեր շնորհին իւրով զարգացուցէ և զազգս մեր ուր ուրեք և իցեն օրհնեսցէ և անդրդուելի պահեսցէ մինչև ի կատարած աշխարհիս ամեն:»

Նոյն երեկոյին վանքի մէջ հրավառութիւն կար և ձեմարանի աշակերտներն աղգային երգեր կերգէին:

Վեհափառ Վաթողիկոսը յունիսի Տին բարեհաճեց գնալ Բիւրականի ամարանոցն, առաւելապէս անձնական տկարութեան թեթեւութիւն գտնելու:

Նորապսակ սրբ. Եպիսկոպոսներն նախ քան իւրեանց վիճակներ գնալն իւրաքանչիւրն Էջմիածնի տաճարի Իջման սեղանում Ս. պատարագ մատոյց և միաբանական ուխտն հիւրասիրեց ճաշկերոյթով և այնուհետև մեկնեցան Ս. Էջմիածնից: Ամենից առաջ գնաց Սեսարիայի ծերունի Եղիայ Եպիսկոպոսը, Յունիսի Կին գնաց Արաբկերի առաջնորդ Եզնիկ Եպիսկոպոսը, Յունիսի Գին գնաց Սեբաստիայի առաջնորդ Պետրոս Եպիսկոպոսն և յունիսի 11ին գնացին Զմիւռնայի առաջնորդ Մելքիսեղեկ Եպիսկոպոսն և Ղարսի առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոսը:

Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, սրբ. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան թողեց ձեմարանի ուսուցչական պաշտօնը, հիւանդութեան պատճառով, և նշանակվեցաւ Ղարսի Ս. Խաչ վանքի վանահայր, ուր և գնաց մայիսի վերջում: